ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<< 07>> հուլիս 2020թ
ք. Եղեգնաձոր

ՈՐՈՇՈՒՄ N 65

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻՑ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի <<Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> N 1477-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2020 թվականի ընթացքում Վայոց ձորի մարզի պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արոտավայրերից կամ խոտհարքներից օգտվելու նպատակով կնքված պայմանագրերի, արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև կենդանիների վարակիչ հիվանդությունների վերաբերյալ փաստաթղթերի արժանահավատությունն ուսումնասիրելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Արդյունքների ամփոփումը կատարել սահմանված ժամկետներում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Недействительная подпись

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2020 թվականի
Հուլիսի ---02---- -ի N-63-Ն որոշում

2020 թվականի ընթացքում պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արոտավայրերից կամ խոտհարքներից օգտվելու նպատակով կնքված պայմանագրերի, արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև կենդանիների վարակիչ հիվանդությունների վերաբերյալ փաստաթղթերի արժանահավատությունն ուսումնասիրելու նպատակով ստեղծված մարզային հանձնաժողովի կազմը.

1. Դավթյան Արմեն ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդականի ժ/պ /հանձնաժողովի նախագահ/
2. Մարգարյան Գեղամ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ /քարտուղար/
3. Հայրապետյան Վահրամ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի կրտսեր մասնագետ
4. Ավագյան Հովիկ ՀՀ ԿԵ ՍԱՏՄ Վայոց ձորի մարզային կենտրոնի պետ /համաձայնությամբ/
5. Մելքոնյան Մեսրոպ ՀՀ ԿԵ ՍԱՏՄ Վայոց ձորի մարզային կենտրոնի գլխավոր մասնագետ տեսուչ /համաձայնությամբ/
6. Իխտիարյան Հովհաննես «Գյուղատնտեսության ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի Վայոց ձորի մարզի գլխավոր համաճարակաբան /համաձայնությամբ/
7. Մանուկյան Մանուկ Ջերմուկ, Կեչուտ բնակավայրերի համայնքային անասնաբույժ / համաձայնությամբ/
8. Պապոյան Գնել Ջերմուկի համայնքապետարանի ծառայությունների մատուցման պայմանագրային աշխատող / համաձայնությամբ/

Invalid signature

ԿԱՄՈ ՍԱՀԱԿՅԱՆ

Signed by: SAHAKYAN KAMO 2108590021

գլխավոր քարտուղար **Կ.ՍԱՀԱԿՅԱՆ**